ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

«10» նոյեմբեր 2025 թ. N 424-Ա

ՀՐԱՄԱՆ

«ԴԵԼՏԱՇԻՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 27-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներով՝

ՊԱՐԶՎԵՑ

Գործի նախապատմությունը.

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար 2024թ. դեկտեմբերի 18-ին Արաքս գետի Արմավիր ջրանցքի վրա պարզարանի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-25/22» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ՝ Ընթացակարգ), որն իրականացվել է էլեկտրոնային գնումների armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Դելտաշին» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից): Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից 2025 թվականի փետրվարի 4-ին տեղի ունեցած հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում արձանագրվել է, որ Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են մի շարք անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ՝ մասնավորապես ներկայացված հայտում բացակայում է.

ա/ Հրավերով պահանջված հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում վերոնշյալ լիցենզիայի ներքո պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ պայմանագրի պատշաճ ձևով իրականացրած լինելը հավաստող փաստաթղթի՝ հաշիվ ապրանքագրերի պատճենները,

բ/ Աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք ծառայություններում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:

Հանձնաժողովի կողմից՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետը Մասնակցին տրվել է մեկ աշխատանքային օր ժամկետ՝ շտկելու արձանագրված անհամապատասխանությունները:

Մասնակցի կողմից շտկված հայտում որպես գեոդեզիստ ներկայացված Նարեկ Սարգսյանի փաստաթղթերում բացակայել է Կադաստրի Կոմիտեի կողմից տրված որակավորման վկայականը:

Հրավերի 1-ին մասի 2-րդ կետի 2.2.1 ենթակետի համաձայն՝ պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից պետք է ներկայացվի առնվազն 1 (մեկ) մասնագետ, ով կունենա մասնագիտական փորձառություն ունեցող գեոդեզիստ:

«Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 16.1 հոդվածի 1-ին մասի պահանջների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրական, հողաշինարարական, չափագրական և հաշվառման գործունեությամբ կարող են զբաղվել Կոմիտեի կողմից որակավորման վկայական ստացած անձինք:

Հաշվի առնելով, որ մասնակցի կողմից որպես գեոդեզիստ ներկայացված մասնագետի որակավորումը հավաստող փաստաթղթերը չեն համապատասխանել Հրավերով պահանջված որակավորման չափանիշներին, Հանձնաժողովը 2025 թվականի փետրվարի 6-ին տեղի ունեցած նիստում որոշում է կայացրել մերժել Մասնակցի կողմից ներկայացված հայտը:

<u>Գործի քննության իրավական հիմքերը.</u>

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք ունի ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն

դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձված պարտավորության խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Հիմք ընդունելով վերոնշյալ իրավական և փաստական հանգամանքները և ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

հրամայում եմ

1. «Դելտաշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 (երկու) տարի ժամկետով:

2. Հրամանը տրամադրվում է լիազորված մարմնին (ՀՀ ֆինանսների նախարարությանը)՝ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում հաստատման պահից և կարող է բողոքարկվել դատական կարգով:

3/10/2025

X

ԱՐԹՈՒՐ ԵՐԻՑՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Signed by: YERITSYAN ARTUR 1609770064

Ա. ԵՐԻՑՅԱՆ

ք. Երևան